



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

16 հուլիսի 2019 թ.

N 575-Ն

ք. Ստեփանակերտ

**ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ջրային օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝
 - 1) Ջրի ազգային խորհրդի կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) Ջրի ազգային խորհրդի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



«Հաստատում»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

[Handwritten signature]
Բ. ՍԱԿԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆԱԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՔՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստից № 12/164
12.04.2019 թ. *[Signature]*
(մտորագրություն)

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվական
հուլիսի 16-ի N 575-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ջրի ազգային խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ջրային ռեսուրսներ կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին է, որ միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրին բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ:
2. Խորհրդի լիազորությունները սահմանվում են Ջրային օրենսգրքով:
3. Խորհուրդը գործում է Ջրային օրենսգրքին, Արցախի Հանրապետության օրենքներին և սույն կանոնակարգին համապատասխան: Խորհուրդն ունի | անվանմամբ ձևաթուղթ:
4. Խորհրդի նախագահին ի պաշտոնե Արցախի Հանրապետության պետակա նախարարն է:
5. Խորհրդի նախագահը՝
 - 1) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը, որոշում է ընդունում հարցմա կարգով խորհրդի նիստ հրավիրելու վերաբերյալ:
 - Իր բացակայության դեպքում խորհրդի նախագահի լիազորություն հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.
 - 2) ապահովում է խորհրդի բնականոն գործունեությունը.
 - 3) խորհրդին է ներկայացնում խորհրդի նիստերի օրակարգերի նախագծերը.
 - 4) խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում համակարգում խորհրդի աշխատանքը:
6. Խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի քարտուղար և ուն քարտուղարություն:
7. Խորհրդի քարտուղարը՝
 - 1) ապահովում է խորհրդի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութեր պատրաստումը այդ թվում՝ հարցման կարգով հրավիրվող խորհրդի նիստերի.
 - 2) ապահովում է խորհրդի նիստերի արձանագրության կազմումը.
 - 3) ապահովում է խորհրդի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.
 - 4) խորհրդի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այ լիազորություններ.
 - 5) ապահովում է քարտուղարության բնականոն գործունեությունը:
8. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) մասնակցելու խորհրդի նիստերին՝ վերջինիս իրավասությանը վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

2) խորհրդի նիստերում հանդես գալու առաջարկություններով (այդ թվում՝ հարցման կարգով հրավիրվող խորհրդի նիստերի):

3) խորհրդի որոշմամբ իրականացնելու այլ լիազորություններ:

9. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի, այդ թվում՝ հարցման կարգով նիստ հրավիրելու միջոցով: Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

10. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Խորհրդի անդամները նիստը վարելու կարգի վերաբերյալ առաջարկություններ անում են մինչև հարցի զեկուցումն ու քվեարկությունից առաջ: Ձեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Ձեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մյուս առաջարկությունները: Այն առաջարկությունը, որն իր բովանդակությամբ հակառակ է արդեն ընդունված առաջարկությանը, քվեարկության չի դրվում:

11. Հարցման կարգով խորհրդի նիստ հրավիրելու դեպքում խորհրդի քարտուղարը խորհրդի նախագահի հետ համաձայնեցված օրակարգի նախագիծը խորհրդի անդամներին գրավոր ներկայացնում է հարցման: Օրակարգը հաստատվելու դեպքում խորհրդի քարտուղարն օրակարգում ընդգրկված հարցերի նյութերը գրավոր ներկայացնում է խորհրդի անդամներին: Խորհրդի անդամները, խորհրդի նախագահի կողմից սահմանած ժամկետում, խորհրդի քարտուղարին ներկայացնում են գրավոր դիրքորոշում՝ հստակ նշելով հարցերից յուրաքանչյուրին «կողմ» կամ «դեմ» լինելու վերաբերյալ: Խորհրդի նախագահի կողմից սահմանած ժամկետում գրավոր դիրքորոշում չներկայացնելու կամ ներկայացված գրության մեջ հարցերի վերաբերյալ հստակ դիրքորոշում չներկայացնելու դեպքում խորհրդի անդամի դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ համարվում է դրական:

12. Հարցման կարգով նիստերի որոշումները համարվում են ընդունված, եթե հարցման կարգով «կողմ» է արտահայտվել խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը:

13. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի 1 ձայն: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է: Խորհրդի որոշումները կարող են վերանայվել միայն խորհրդի կողմից: Խորհրդի որոշումները խորհրդատվական բնույթ ունեն:

14. Խորհուրդն իրավունք ունի իր լիազորությունների իրականացման համար պետական մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ու քաղաքացիներից պահանջելու տեղեկանքներ, պարզաբանումներ և այլ փաստաթղթեր:

15. Խորհրդի նիստերում, բացի խորհրդի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու խորհրդի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի

իրավունքով: Խորհուրդը կարևոր հարցերի վերաբերյալ կարող է կազմակերպել ընդլայնված լուսններ՝ հրավիրելով պաշտոնատար անձանց և մասնագետներ: Խորհրդի քննարկումների բովանդակային խնդիրները ենթակա են հրապարակման: Խորհուրդը տարեկան մեկ անգամ հրապարակայնորեն հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումը պետք է արտացոլվի արձանագրության մեջ:

16. Խորհուրդն իր լիազորությունների սահմաններում առանձին խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խումբ (խմբեր)՝ ներգրավելով համապատասխան մասնագետների:

Քարտուղարության և աշխատանքային խմբերում ներգրավված մասնագետների վարձատրությունը՝ խորհրդի ներկայացմամբ, սահմանվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից: Աշխատանքային խումբը (խմբերը) կատարած աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացնում խորհրդին:

17. Խորհրդի անդամն իր լիազորություններն իրականացնում է հասարակական հիմունքներով: Քարտուղարության և խորհրդի աշխատանքները կազմակերպելու համար հատկացվում են անհրաժեշտ նյութեր, սարքեր, սարքավորումներ, տեխնիկական միջոցներ, աշխատանքային տարածք և տրանսպորտային միջոցներ, որոնց տրամադրման կարգը խորհրդի ներկայացմամբ սահմանում է խորհրդի նախագահը:

ԱՐՏԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ձ Մ
ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

- Արցախի Հանրապետության պետական նախարար (խորհրդի նախագահ)
 - Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարար
 - Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
 - Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարար
 - Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
 - Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
 - Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ
 - Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն
 - Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
 - Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ (ջրային ռեսուրսների ոլորտի համակարգող)
 - Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի տարածքային կառավարման վարչության պետ
 - Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ
 - Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի պետական գույքի կառավարման վարչության պետ
 - Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ
- «ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԼԱԶԱՐՅԱՆ